ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ - ԲԱՄԲԱԿՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

6234 220

# ՀՐԱՀԱՆԳ

## ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ ԵՐԵՎԱՆ 1936

# ՀՐԱՀԱՆԳ
## ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

633.51:631.55

*Բամբակի բերքահավաքի հաջողությունն ամբողջովին կախված է այն աշխատանքներից, վոր կկատարվեն նրա նախապատրաստական շրջանում, և նրանից, թե ինչպես կկազմակերպվի բերքահավաքը և ինչպիսի պայքար կմղվի կորուստների դեմ, ըստ վորում աշխատանքի ճիշտ կազմակերպման, նրա վարձատրության և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության հարցերը բամբակի բերքահավաքի կազմակերպման հիմքը պետք է կազմեն։*

*Բերքահավաքին նախապատրաստված դիմավորելու և այն կազմակերպված ձևով անցկացնելու համար բամբակացան շրջանների հողբաժինները, ՄՏԿ-ն ու կոլտնտեսությունները հետևյալ միջոցները պետք է ձեռնարկեն։*

### 1. ՄԻՆՉԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

*1. Բոլոր կոլտնտեսությունների, ինչպես և յուրաքանչյուր կոլտնտեսության առանձին բրիգադի համար սահմանել բամբակի բերքահավաքի ժամանակն և ընդհանուր պլանը։ Այդ պլանները պետք է հասցնել*

յուրաքանչյուր կոլտնտեսության ու բրիգադի և լայնորեն քննության առնել կոլտնտեսություններում, բրիգադներում, օղակներում և աշխատավոր մենատնտեսների մոտ։

2. Բոլոր կոլտնտեսություններում ստուգել և աշխորերի գրքույկներում գրանցել ցանքի մշակման ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած բոլոր աշխորերը։

3. Յուրաքանչյուր բրիգադ մինչև բամբակի հավաքի վերջանալը ապահովել.

ա) առնվազն ութ շրջանառության համար անհրաժեշտ քանակի բարդաններով.

բ) վերանորոգված փոխադրական միջոցներով և անհրաժեշտ լծասարքով.

գ) կշեռքներով ու կշռաքարերով։

4. Գոյություն ունեցող կամուրջները վերանորոգել և, որտեղ անհրաժեշտ է, նորերը կառուցել, ինչպես և գյուղամիջի ճանապարհները, և փոս տեղերը քար ու հող լցնել։

5. Ամբակային գյուղատնտեսների և բամբակազտիչ գործարանների աշխատակիցների միջոցով կոլտնտեսականներին ծանոթացնել 1936 թ. բամբակի հումքի, սահմանված ստանդարտի նմուշների և բամբակի դաշտային ապրոբացիայի տվյալներին։

6. Մինչև բերքահավաք ամեն մի կոլտնտեսության համար սահմանել բամբակն տանող տարայի (բարդանների) փոխադրելու պլան և հետևել, որ ժամանակին չաթաններ պատրաստվեն, ֆուրգոններ

(կամ ավելի) կողերը բարձրացնեն՝ հումքն առանց կորստի գնման կայաններ հանձնելու համար։

## Զ. ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

1. Կտրականապես արգելված է սահմանել մինչև այժմ կիրառվող ձևը՝ 3 չանաք։ Բերքահավաքն սկսել առանձին թփերից՝ առաջին կնգուղները բացվելուն պես, ամեն օր շրջելով բամբակի դաշտերն ու հավաքելով մինչև այդ օրը բացված կնգուղները։

2. Բամբակը հավաքել միայն լավ բացված կնգուղներից, յերբ հեշտությամբ է դուրս գալիս ու կնգուղի մեջ վոչ մի թելիկ չի թողնում։

3. Բամբակը պետք է հավաքել չոր յեղանակին։

Վաղ առավոտյան հավաքելիս (յերբ ցողը դեռ նստած է), մինչև բարդաններ լցնելը, հենց դաշտում բամբակը բրեզենտների կամ բարդանների վրա փռել և չորացնել։

4. Անձրևից հետո պետք է քիչ սպասել, մինչև բամբակը չորանա, վորից հետո միայն սկսել չանաքը։

Յեթե անձրևից հետո հավաքված հումքը սահմանված ստանդարտ նորմայից ավելի խոնավություն ունենա, անհրաժեշտ է դաշտում՝ բրեզենտների կամ բարդանների վրա չորացնել—սահմանված խոնավության հասցնել, վորից հետո միայն լցնել բարդանների մեջ։

5. Զրությունից, հիվանդություններից ու վնասատուներից վնասված և ժամանակից առաջ բացված կնգուղների բամբակն առանձին է հավաքվում, առանց խառնելու ամբողջ բամբակի հետ, և առանձին

ել հանձնվում է գնման կայան։ Հիվանդ, լրիվ չբացված, դեղին, վատ ու սև սերմեր ունեցող բամբակը գոգնոցի առանձին գրպանի մեջ է հավաքվում։

Հետագայում հիվանդ բամբակն առանձին բարդանների մեջ հանձնվում է գնման կայան։

6. Բամբակը հավաքել մաքուր, առանց կնդուղի տակի չորացած բաժակաթերթիկներից կամ չոր տերևներից բռնելու, թույլ չտալով, որ հումքի վրաև աղբ ընկնի մեջը։

7. Գետնից հավաքած բամբակն առանձին տեղ դնել և առանձին բարդանների մեջ լցնել։

8. Հավաքած բամբակը դաշտում յուրաքանչյուր հավաքողից ընդունել առանձին ու նրա ներկայությամբ ճիշտ կշռել, թույլ չտալով հավաքած բամբակն «աչքաչափով» վորոշել։

9. Հանձնվող բամբակի հումքի չափը ճիշտ կոմպլեկտավորելու և բամբակազտիչ գործարանում ճիշտ մաքրելու համար չպետք է խառնել.

ա) թաց ու չոր բամբակը։

բ) առողջն ու պակասություն ունեցողը.

գ) մինչև ցրտահարությունը հավաքածն ու հետո քաղածը,

դ) սերմացուն՝ հոմոզայինի հետ և հոմոզայինը խառնածի հետ.

ե) զանազան արդյունաբերական տեսակներ —1 ընտիր, 1 նորմալ, 1 ցածր, և այլն.

զ) բուսաբանական այլատեսակները (№№ 915, 246)։

10. Յարովիզացիայի ենթարկված սերմերի ցանքերից ու քիմիացման ենթարկված փորձադաշտերից

հավաքած բամբակը հաշվի չի առնվում ու հանձնվում գնման կայան՝ ՄՏԿ-ի գյուղատնտեսների և կոլտնտեսական բրիգադների կողմից առանձին:

11. Մինչև բերքահավաքի վերջը շարունակ պայքարել բամբակի ցանքերը կերցնողների, փչացնողների և բամբակը վառողների դեմ՝ դատական պատասխանատվության կանչելով նրանց:

## 3. ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

1. Սերմացու համարվում է 1 տեսակի՝ ցրտահարությունից (շախտայից) առաջ հավաքված այն հողամասերի հումքը, որոնց ցանքերն ապրոբացիան անցկացնելուց հետո ճանաչված են իբրև սերմացու ցանքեր:

2. Սերմացու հումքի հավաքումը կատարվում է բամբակենու դաշտային ապրոբացիայի արդյունքների համապատասխան:

3. Ապրոբացիայի ժամանակ իբրև սերմացու ընտրված ցանքերը, նայած տեսակի մաքրության, բաժանվում են հետևյալ կարգերի.

ա) «սերմացու», այն դաշտերը, որտեղ ցանված է 90,5% — № 915 և 96% — № 0246 և բարձր տեսակային մաքրություն ունեցող առաջ և բերքատու բամբակ.

բ) հատուկ հաշվի առնված, որտեղ ցանված են վերոհիշյալ %-ից ցածր տեսակային մաքրություն ունեցող սերմեր (բայց ոչ պակաս 80%-ից) և մինչև 5% կնգուղային ձևի հոմոզով վարակվածը:

4. Ապրոբացիայի արդյունքների մասին Վաղ-

պատի և Ղամարլուի ՄՏԿ-ն ապրոբացիոն արձանագրություններից քաղվածքնիր են կազմում, վորոնց մեջ նշվում են հողամասերը, դաշտերն ու սերմացու հումքի վորակը, վոր պիտի մթերեն կոլտնտեսությունններն ու մենատնտեսները։

Այդ քաղվածքները խմբակային գյուղատնտեսների միջոցով հանձնվում են բրիգադներին, վորոնք պատասխանատու յեն սերմացու բամբակը թե առանձին հավաքելու և թե գնման կետերին առանձին հանձնելու համար։

5. Սերմֆոնդի մթերման համար իբրև անպետք խոտանվում են հետազոտվող այլատեսակներով ուժեղ խառնված բոլոր ցանքերը։

Նույնպես խոտանվում են ցողունային՝ 80%-ից բարձր, ինչպես և վիլտով ու չլրայով (չլիճներով) ուժեղ վարակված դաշտերը։

6. Հատուկ հաշվետվության առնված դաշտերի սերմը հանձնվում է Հողժողկոմատի հատուկ ֆոնդին։

7. Սերմացու հումքի բերքահավաքը կատարվում է առանձին՝ համաձայն սահմանված ապրոբացիայի կարգերի, վորի համաձայն բրիգադը կամ օղակը սահմանված կարգով կատարում է առանձին բերքահավաք՝ չխառնելով նրանց մյուս հավաքածների հետ, ըստ վորում օղակը միանգամից հավաքում է միայն այս կամ այն կարգի հումքը։

8. Գնման կայաններին ու բամբակազտիչ գործարաններին յուրաքանչյուր անգամ հանձնվող սերմացու բամբակի հումքին կցվում է անձագիր՝ ըրի-

պարկերի ու կոլտնտեսության նախագահի ստորագրությամբ, որի մեջ մանրամասն նշվում է.

ա) կոլտնտեսությունը.

բ) բրիգադի №.

գ) բուսաբանական այլատեսակությունը.

դ) հումքի հիվանդ, չորությունից վտանգված կամ առողջ լինելը.

ե) հավաքված է մինչև ցրտահարություն, քաղված է ցրտահարությունից հետո.

զ) սերմացու, հումոզային կամ խառնված.

է) արդյունաբերական տեսակը, ընտիր, նորմալ, ցածր և այլն.

ը) որ ռեպրոդուկցիան է։

Սերմացու բամբակի հումքն առանց անձագրի և նմուշների, գնման կայանները չպետք է ընդունեն։

9. Սերմացու հումքը հավաքելուց առաջ բոլոր պարկերը, որոնց մեջ բամբակ է հավաքված լինել, պետք է շուռ տալ ու թափ տալ մեջը մնացած հումքը և կարերի տեղն ուշադրությամբ մաքրել։

10. Բերքահավաքի ընթացքում ցրտահարություն լինելու դեպքում, որի հետևանքով բամբակենու աճեցողությունը կանգ է առնում, դաշտում յեղած ու նորմալ բացված ամբողջ բամբակը պետք է հավաքել ցրտահարությունը (շախտան) սկսած առաջին 5—6 օրվա ընթացքում և համարել մինչև ցրտահարություն հավաքված հումք։

11. Ելիտ-սերմնաբուծական ցանքերի հումքը հավաքելու ժամանակ, բամբակի հավաքման արտադրական նորմաները սահմանվում են սովորական նորմաներից 20—25% ցածր, պահպանելով աշխօրերով ընդունված գնահատումները։

12. Էլիտ-սերմնաբուծական ցանքերի հունձը հավաքվում է գյուղատնտեսական սերմնաբուծների անմիջական հսկողությամբ։

13 Սերմնաբուծական կոլտնտեսությունների այն կտորները, վոր նշանակված են 1937 թ. էլիտ տնկարանի թփեր ընտրելու համար, հումքահավաքը հետաձգվում է։ Սկզբում առանձին նշված թփերն են չանաքում, իսկ հետո՝ շարքերը, տնկարանի սերմնաբուծի հսկողությամբ, և հատուկ բարդաններով հանձնում են ՄՏԿ ի Ջինհասույքին կից լաբորատորիան։

14. Սերմացու հումքն առանց տարայի տեղափոխելը, ինչպես և տարայով, բայց առանց պիտակի, արգելվում է։

15. Բամբակահավաքի ընթացքում շրջհողբաժինները պարտավոր են ղեկավարել թե կոլտնտեսության և թե անհատական սեկտորի բերքահավաքը, ինչպես և որական հավաքած բամբակի առաքման գործը։

Գյուղխորհրդի ներկայացուցիչները սիստեմատիկորեն շրջագայելով մենատնտեսների բամբակի դաշտերը՝ ստուգում են բերքահավաքը ժամանակին ու վորակով կատարելն ու բամբակի փոխադրությունն այն հաշվով, վոր օրվա հավաքած բամբակը նույն օրը հանձնվի գնման կայան։

## 4. ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԲԱՄԲԱԿԱՀԱՎԱՔԸ

1. Բամբակի բերքահավաքն ոդաքաշ (տուրման վակուումներով) մեքենաներով կատարելու համար ընտրվում են միջակ խտության թփեր, ուղիղ շար-

քեր և ավելի հավասար բացված կնգուղներ ունեցող տրակտորացան ցանքեր։

2. Բերքահավաքն ողաքաշ մեքենաներով կատարելու ժամանակ՝ բամբակն աղտոտվելուց խուսափելու համար՝ արգելվում է.

ա) շլանգը բաց բերնով մոտեցնել հողին.

բ) շլանգը մոտեցնել կանաչ կամ չոր տերևներին ու կնգուղներին.

գ) Ներս քաշելու համար շլանգի բերնին մոտեցնել կոտրված կնգուղները՝ տերևակիցներով։

3. Յուրաքանչյուր շլանգավոր շլանգ կախելու գոտի պետք է ունենա, վորով, շլանգավորը շլանգով առաջ շարժվելու ժամանակ, բամբակենու ճյուղերն ու կնգուղները կոտրվելուց ու թափվելուց ապահով կլինեն։

4. Մեկ թփից մյուսին անցնելիս պետք է լավ ուշք դարձնել, վոր շլանգները շարքամիջերում լինենք և բամբակենու թփերը չջարդեն։

5. Յուրաքանչյուր շլանգավորի ամրացնել շլանգի և վորոշ շարքերի, վորոնց լրիվ բերքահավաքի համար պատասխանատու պետք է լինի հիշված շլանգավորը։

6. Տուրմանը պետք է գնա վոչ թե հավաքողներին հավասար, այլ վորոշ տարածության վրա գտնվի և առաջ շարժվի միայն այն ժամանակ, յերբ հավաքողն առաջ կանցնի, այսինքն՝ տուրմանը պետք է անցնի արդեն հավաքած հողամասով։

Ծանոթություն.—Սլեդինգների աշխատանքների և աշնանավարի մասին հրահանգը կուղարկվի մոտ օրերս։

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Բամբակի բերքահավաքը կատարում է ողակը՝ ողակավարի ղեկավարությամբ՝ ողակին ամրացված այն հողամասից, որը նա մշակել է։

Ողակավարը՝ բրիգադիրից ստացած հնգօրյա առաջադրանքի հիման վրա՝ ամեն օր ողակի յուրաքանչյուր անդամին մի քանի շարք է հատկացնում, որտեղ և վերջինս կատարում է բերքահավաքը։

Երբ տվյալ ողակի հողամասում լավ բացված կոճակներ չկան, բերքահավաքի տեմպերը կոլտնտեսություններում չթուլացնելու նպատակով՝ բրիգադիրն իրավունք ունի, իբրև բացառություն, թույլ տալ ողակը ժամանակավորապես փոխադրել այլ հողամաս։

Այս փոխադրության դեպքում ողակը պարտավոր է անընդհատ հետևել իր հողամասի բամբակենու դրությանը և բացվելուն պես վերադառնալ իր հողամասը։

Այն ողակը, որին օգնություն է ցույց տրվում, հենց ինքն էլ ստուգում է օժանդակ ողակի աշխատանքը, որի համար և պատասխանատու է։

2. Յուրաքանչյուր ողակի ներսում բամբակի հումքը հավաքվում է բացառապես անհատական գործարքի հիմունքներով։

3. Առաջադրել կոլտնտեսություններին՝ ողակավարներին հաշվել լրացուցիչ 10—15% աշխօր՝ առաջադրանքն ողակի կողմից կատարվելու պայմանով։

4. Ամեն օր, օրվա վերջին, բրիգադիրը բրիգադի անդամներին հայտնում է, թե ո՛վ քանի աշ-

քոր և վաստակել, և յուրաքանչյուր հնգօրյակը մի անգամ աշխօրերը գրանցում է կոլտնտեսականների աշխգրքույկներում։

5․ Բամբակի բերքահավաքի արտադրանքի նորմաները պետք է այնպես սահմանված լինեն, որ հավաքողին առավելագույն չափով շահագրգռեն։

Դրա համար էլ արտադրանքի նորմաները պետք է աստիճանաբար աճեն՝ սկսած բերքահավաքի առաջին օրերից մինչև կնգուղների մասսայական բացվելը։

Ցրտահարությունից հետո չբացված կնգուղները հավաքելու համար այլ նորմաներ պետք է սահմանել։

Սահմանված նորմաներից ավելի հավաքած բամբակի աշխօրերը պետք է բարձրացնել մինչև մեկ ու կես անգամ։

Այս պատճառով՝ կոլտնտեսություններն իրենց ընդունած նորմաները պետք է վերանայեն և ճշտեն ըստ բրիգադի ողակի առանձին դաշտի։

Հողբաժինները, ՄՏԿ-ները նոր նորմաներ վերամշակելու գործում կոլտնտեսություններին պետք է իրական օգնություն ցույց տան և ղեկավարեն։

6․ Տուրմաններով բերք հավաքելու դեպքում առաջարկել օրական արտադրանքի և աշխօրերով գնահատության հետևյալ օրինակելի նորմաները․

ա) տասը շլանգանի տուրմանի համար՝ 450—600 կգ և յուրաքանչյուր շլանգավարին՝ 1,5 աշխօր, բ) 6 շլանգանի տուրմանի համար 300—400 կգ և յուրաքանչյուր շլանգավարին՝ 1,5 աշխօր, ղեկավար տրակտորիստին՝ արտադրանքի նորման կատարելու համար՝ 3 աշխօր։

7․ Կնգուղները ալեղինգներով հավաքելու դեպ-

ցում առաջադրել արտադրանքի հետևյալ նորմաները․

ա) մեկ շարքանի սլեդինգների 1,5 հեկ. 15 աշխօր․

բ) չորս » » 8,0 » 1,75 »

8. Բամբակի բերքահավաքի արտադրողականությունը բարձրացնելու համար առաջադրել՝ չանաքը կատարել յերկու ձեռքով։

Բամբակը յերկու ձեռով չանաքելու համար կոլտնտեսական լայն մասսաներին շահագրգռելու նպատակով՝ աչքի ընկնող կոլտնտեսականներին պարգևատրել։

9. Նկատի ունենալով, վոր բամբակի բերքահավաքը ժամանակին ավարտելու գործում կանանց աշխատանքը վճռական նշանակություն ունի՝ այն ավելի լավ օգտագործելու նպատակով առաջարկել կոլտնտեսություններին օրինակելի արտադրանքի հետևյալ նորմաները, վոր դիֆերենցիացիայի պետք է յենթարկվեն ըստ առանձին դաշտերի և տասնորյակ-ների, նայած բամբակենու բացվելուն։

ա) վոչ մասսայականորեն բացված կնգուղների հողամասերի համար . . . . 20—30 կգ

բ) կնգուղները մասսայականորեն բացված ժամանակ . . . . 40—60 »

գ) վերջին հավաքի համար . . . 15—25 »

դ) կնգուղների » . . . . 50—75 »

Անհրաժեշտ է մանկամսուրների մանրամասն ստուգում կատարել ու կոնկրետ միջոցներ ձեռք առնել՝ համապատասխան կադրերով, անհրաժեշտ ինվենտարով, սննդամթերքներով և այլն նրանց ապահովելու համար։

10. *Ստախանովական բրիգադավարի հիմնական նախապայմանն է.*

*ա) բամբակի դաշտերի ճիշտ ընտրությունն ու արտադրանքի նորմաների որոշումը, նրանց մասսայականացումը կոլտնտեսության բրիգադում և օգտագործում այն հաշվով, որ ամեն մի կոլտնտեսականի համար պարզ լինի ըստ դաշտերի նշանակված նորմաները.*

*բ) անհատական գործավարձ արմատացնել ամեն մի օղակում և օրվա արտադրանքի հաշվառում սահմանել ամեն մի կոլտնտեսականի համար.*

*գ) անցյալ տարվա առաջավոր չանաքավորների փորձի փոխանցումն ու մասսայականացումը՝ կոլտնտեսականների խորհրդակցություններում.*

*դ) ստախանովական չանաքավորների հաշվառում կոլտնտեսություններում, հողբաժնում և ՄՏԿ-ում՝ ստախանովականների հաշվառման համար պատվոյ գրքում, նրանց պարգևատրում և փորձի մասսայականացում՝ պատի թերթերում, պարբերական մամուլում և այլն։*

Բամբակվարչության պետ՝ ԱԴՈՅԱՆ

Ավ. գյուղատնտես՝ ԳԱԳՈՎ

A 3974

Սր. սրբիչ՝ Գ ա ր. Հ ա կ ո բ յ ա ն

Գլավլիտի լիազոր № 1115, Հրատ. № 377 պատվեր 656 տիրաժ 750
Հանձնված է արտադրության 29/IX 1936 թ.
Ստորագրված է տպելու 1/X 1936 թ.

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038812

[0343]
661
А $\frac{I}{3974}$
Пров. 1940 г.
Пров.